ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ (ՋՐԵԼԱՏԵՂԻ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/25/2»

ք. Տաշիր «26» մարտի 2021թ.

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ը, ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու 1), և «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն, ի դեմս նախագահ՝ Մ. Այվազյանի, որը գործում է «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու 2), որի անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ Գ. Թովմասյանը, մի կողմից, և «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Բրուտյանի, որը գործում է «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (ջրելատեղի) կառուցապատման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուները պարտավորվում են ընդունել կատարված աշխատանքը վճարել մրցույթում առաջարկված գնի 10/90 համաֆինանսավորմամբ (10% Պատվիրատու 1-ի և 90 % Պատվիրատու 2՝ առանց ԱԱՀ:**

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 31.05.2021թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի **թերությունների հետ կապված** պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ **աշխատանքի իրականացման** նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից **Կապալառուի կատարած** աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ **պայմանագիրն** օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հասուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ

նարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր վճարման ենթակա գումարը կազմում է 2738241 (երկու միլիոն յոթ հարյուր երեսունութ հազար երկու հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ, այդ թվում համայնքի կողմից վճարման ենթակա 10 % մասնաբաժնի համար հաստատելիք ԱԱՀ-ն 53691 (հիսուներեք հազար վեց հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ:

Պատվիրատու 1-ի վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 322146 (երեք հարյուր քսաներկու հազար հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ, այդ թվում 53691 (հիսուներեք հազար վեց հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ՝ ԱԱՀ-ն:

Պատվիրատու 2-ի վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 2416095 (երկու միլիոնչորս հարյուր տասնվեց հազար իննսունհինգ) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:

5.1.1 Համաձայն վճարման ժամանակացույցի (Հավելված 3) Կապալառուն կատարված աշխատանքների համար ներկայացնելու է 2 կարգի հաշիվ ապրանքագրեր՝

Պատվիրատու 1-ին՝ հարկային հաշիվ ներառյալ ԱԱՀ,

Պատվիրատու 2-ին՝ հաշվարկային փաստաթուղթ առանց ԱԱՀ, որն ել իր հերթին պարտավորվում է ներկայացնել Կառավարության 26 փետրվարի 2004թ-ի 256-Ն Որոշման համաձայն ԱԱՀ-ից ազատման վերաբերյալ տեղեկանք:

Պատվիրատուները վճարումը կիրականացնեն Կապալառուի կողմից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ ապրանքագրի հիման վրա:

5.1.2 Վճարման ներկայացված յուրաքանչյուր հանձնման-ընդունման արձանագրություն հաշվարկվում է Աշխատանքների Ծավալի և Արժեքի տեղեկագրի հիման վրա, որը Կապալառուի կողմից ներկայացվում է սույն պայմանագրի պահանջների համաձայն: Աշխատանքների Ծավալի և Արժեքի տեղեկագիրը պետք է արտացոլի ողջ Պայմանագրի Արժեքի բաշխումը ըստ աշխատանքի առանձին փուլերի և ներկայացվի այն տեսքով և ժամկետներում, որոնք կերաշխավորեն դրա գործնական կիրառումը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

դրել նախքան Հայաստանի Հանրապետության **օրենսդրությամբ** սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական **հատկացումների նվազեցումը:**

8.9 Կապալառուի կողմից **ստանձնած պարտավորությունները** չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ **կամ մասնակի միակողմանի** լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am **հասցեով գործող ինտերնետային** կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ **նշելով հրապարակման** ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է **պատշաճ ծանուցված**՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն **ամբողջությամբ** կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու **օրը Պատվիրատուն** այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ **ծագած վեճերը** լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին **տրվում է** մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի **անբաժանելի** մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված **հարաբերությունների** նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1

Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06954139

---------- Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Համբարյանշին» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տավրոս 4 Փ., 2 նրբ., Տ 41
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝16600182886100
ՀՎՀՀ՝06960732
Տնօրեն՝
Հ. Բրուտյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2

«Ռազմավարական զարգացման գործակալություն»ՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701006
Նախագահ՝ Մ. Սիմոնյան
լիազորված անձ՝ Գ. Մովսիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«26» մարտի 2021թ. կնքված
N«ՀՀԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/25/2»
ծածկագրով պայմանագրի

Հավելված 2

ԾԱԿԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագոդարնոյե բնակավայրի „Ավազի հանք„ արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում

	NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	միավորի գին	Ընդամենը հազար դրամ
		Պատվիրատու 1				
1	2	3	4	5	6	7
		Ընդհանուր տեղամաս				
1	1-1587	3 -րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով	1000մ^3	0,094	319,149	30,000
2	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով	մ^3	2,0	5,000	10,000
3	23-1 1-1184	նախապատրաստական շերտի իրականացում 100մմ հաստ փափուկ բնահողից տոփանումով	մ^3	3,0	6,667	20,000
4	22-117	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում հողի մեջ DN32x2,4 /12,5մթն/ /փորձարկումով/	մ	240,0	0,083	20,000
5	22-366	պոլիէթիլենե եռաբաշխիչ DN32x32x32	հատ	2	0,500	1,000
6	22-366	ճկուն կցորդիչ DN32	հատ	2	0,500	1,000
7	22-366	պոլիէթիլենե անկյունակ DN32	հատ	8	0,750	6,000
8	22-384	արույրե փական Φ32մմ	հատ	1	2,000	2,000
9	22-314	խողովակների ախտահանում	կմ	0,240	41,667	10,000
10	11-2	Բնահողի տոփանում խճով դիտահորի տակ	100մ^2	0,005	1000,000	5,000
11.1	11-11	բետոնե հատակի կառուցում դիտահորի տակ B-7.5բետոնով 100մմ հաստ	մ^3	0,051468	1500,000	77,202
		Ընդամենը				**182,202**
		ԱԱՀ 20%				**36,440**
		Ընդամենը				**218,642**
		Պատվիրատու 2				
11.2	11-12	բետոնե հատակի կառուցում դիտահորի տակ B-7.5բետոնով 100մմ հաստ	մ^4	0,048532	1500,000	72,798
12	9-153	պողպատե խողովակից դիտահորի տեղադրում	տն	0,07	214,286	15,000
13	շուկա	Պողպ. խողովակ Φ530մմ	մ	0,50	4,000	2,000
14	շուկա	կափարիչ պողպ.թերթից 3մմ	մ^2	0,283	7,067	2,000
15	շուկա	ծխնի L-150	հատ	1	0,808	0,808
16	26-79	պողպատե էլեմենտների հակակոռոզիոն ներկում բիտումային մածիկով	100մ^2	0,02	150,000	3,000
17	15-614	պողպատե խողովակի հակակոռոզիոն ներկում 2 անգամ	100մ^2	0,02	40,417	0,808
18	1-1635	բնահողի հետլիցք մեխանիզմով	1000մ^3	0,076	263,158	20,000

19	1-968	փափուկ բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	2,00	5,000	10,000
20	1-1184	բնահողի տոփանում	մ^3	78,00	0,321	25,000
21	1-968	ավելորդ բնահողի փոռում տեղում ձեռքով	մ^3	18,00	0,667	12,000
		Աղբյուրակապ				0,000
1	1-1587	3 -րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով	1000մ^3	0,005	1600,000	8,000
2	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով	մ^3	0,50	16,000	8,000
3	շուկա	Պողպ.խողովակ Φ18x2մմ	մ	0,60	1,347	0,808
4	շուկա	պողպատե խողովակակտոր երկկողմանի արտաքին պարուրակով Φ57մմ	մ	2,00	2,000	4,000
5	շուկա	պողպատե.խողովակ Φ57մմ	մ	1,40	1,429	2,000
6	22-119	Պոլիէթիլենային ծակոտկեն խողովակ d=160	մ	0,92	4,348	4,000
7	22-384	գնդային փական Φ50մմ	հատ	1	11,000	11,000
8	22-366	կցաշուրթ Φ50մմ	հատ	2	0,500	1,000
9	22-366	պոլիէթիլենե անցում DN50/32	հատ	2	0,500	1,000
10	22-117	Պոլիէթիլենային խցափակիչ DN160	հատ	2	1,213	2,425
11	շուկա	Պողպ.անկյունակ L63x5 , 2800մմ	մ	2,80	2,887	8,083
12	շուկա	Պողպ.անկյունակ L45x4 , 2735մմ	մ	2,735	1,478	4,042
13	շուկա	Պողպ.թերթ 2 մմ հաստ.	կգ	11,85	0,205	2,425
14	շուկա	Պողպ.ականջիկ	հատ	2	0,808	1,617
15	շուկա	Պողպ. բռնակ	հատ	1	0,808	0,808
16	շուկա	ծխնի	հատ	2	0,808	1,617
17	շուկա	կախովի փական	հատ	1	0,808	0,808
18	շուկա	Պողպ.թերթ 4 մմ հաստ.	կգ	1,50	1,078	1,617
19	22-362	պողպատե ձևավոր մասերի տեղադրում	տն	0,02	2020,833	40,417
20	11-11	Բետոնե նախապատրաս-տական շերտ B 15 մ.բ.մ.բ., W4, F150	մ^3	0,18	44,907	8,083
21	6-15	բետոնե հատակ B 22.5 մ.բ.,W6, F150	մ^3	0,12	67,361	8,083
22	6-128	պատերի կառուցում B 22.5, W6, F150	մ^3	1,15	35,145	40,417
23	8-28.	Կավե փականի ստեղծում	մ^3	0,10	40,417	4,042
24	11-6	գլաքարի շերտ/15-40/մմ h=20սմ	մ^3	0,50	24,250	12,125
25	11-5	կոպիճի շերտ/3-7/մ h=15սմ	մ^3	0,40	40,417	16,167
26	11-5	ավազի շերտ/0.5-1/մմ h=10սմ	մ^3	0,25	32,333	8,083
27	շուկա	պոլիէթիլենային թաղանթ 0.5մմ	մ^2	2,50	0,970	2,425
28	շուկա	դիաֆրագմա	կգ	0,30	13,472	4,042
29	շուկա	խամուտային անցում Φ160-Φ50	հատ	1	1,617	1,617
30	շուկա	անցում Φ50xde50	հատ	2	16,167	32,333
31	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	2,5	3,233	8,083
32	1-968	ավելորդ բնահողի փոռում տեղում ձեռքով	մ^3	3,0	1,347	4,042
33	15-614	պողպատե խողովակի հակակոռոզիոն ներկում 2 անգամ	100մ^2	0,03	269,444	8,083
		Ջրախմոց				0,000
1	1-1612	ջրախմոցի երկայնքով բնահողի կտրումով մեխանիզմով տեղափոխելով մինչև 10մ փռելով տեղում	1000մ^3	0,0066	27272,727	180,000
2	1-969	նույնը ձեռքով	մ^3	1,40	71,429	100,000

3	11-6	խճի նախաշերտ 10սմ	մ³	13,0	46,154	600,000
4	22-74 գ-0.5	պողպատե կիսախողովակների տեղադրում Φ530x6մմ	գծմ	24,0	3,333	80,000
5	շուկա	պողպատե խողովակների կիսում Φ530x6մմ	գծմ	12,00	5,000	60,000
6	9-153	Մետաղական շինվածքներ կիսախողովակների տեղադրման համար	տն	0,3308	30,230	10,000
7	շուկա	Պողպ.քառակուսի խողովակ 100x100x5մմ	մ	17,71	0,452	8,000
8	շուկա	Պողպ.թերթ 6մմ	տն	0,0104	769,231	8,000
9	շուկա	Պողպ.թերթ 5մմ	տն	0,0303	1980,198	60,000
10	շուկա	Պողպ.խողովակΦ15մմ	մ	49,10	0,204	10,000
11	շուկա	Պողպ.խողովակ Φ32մմ	մ	4,10	0,099	0,404
12	22-366	պողպատե եռաբաշխիչ Φ32x32x32	հատ	1	0,404	0,404
13	22-366	պողպատե անկյունակ Φ32	հատ	5	2,000	10,000
14	22-383	գնդային փական Φ 32մմ	հատ	3	1,333	4,000
15	շուկա	ճկուն կցորդիչ Φ32	հատ	2	2,000	4,000
16	շուկա	շերտապողպատ -40x4մմ	կգ	0,800	5,000	4,000
17	1-962	4-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով	մ³	1,80	2,222	4,000
18	6-20	բետոնե հիմքի կառուցում B-7.5 մակնիշի	մ³	1,90	21,053	40,000
19	1-968	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ³	1,80	4,491	8,083
20	15-614	մետաղական էլեմենտների հակակոռոզիոն ներկում 2 անգամ	100մ²	0,54	44,907	24,250
		Ընդամենը				*1639,848*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06954139

Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կապալառու
<<Համբարյանշին>>ՍՊԸ
ք. Վանաձոր, Տավրոս 4 Փ., 2 նրբ., Տ 41
<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ`166Կաբալառու00182886100
ՀՎՀՀ` 06960732
Տնօրեն`
Հ. Բրուտյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2
,Ռազմավարական զարգացման գործակալությունՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
,Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022400701006
Նախագահ՝ Մ. Այվազյան
լիազորված անձ՝ Գ. Թովմասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Չափաբաժին 3

ԾԱԿԱԼԱԹԵՐԹ-Ն ԱԽԱՀԱՇԻՎ

Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի ,,Ճահճի տարածք,, ագրոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում

Պատվիրատու 1

	NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		Ընդհանուր տեղամաս				
1	1-1587	3 -րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով	1000մ^3	0,018	555,556	10,000
2	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով	մ^3	2,0	10,000	20,000
3	23-1 1-1184	նախապատրաստական շերտի իրականացում 100մմ հաստ փափուկ բնահողից տոփանումով	մ^3	3,0	5,000	15,000
4.1	22-117	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում հողի մեջ DN32x2,4 /12,5մթն/ /փորձարկումով/	մ	37,1287	1,111	41,250
		Ընդամենը				86,250
		ԱԱՀ 20%				17,250
		Ընդամենը				103,500

Պատվիրատու 2

4.2	22-117	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում հողի մեջ DN32x2,4 /12,5մթն/ /փորձարկումով/	մ	7,8757	1,111	8,750
5	22-366	պոլիէթիլենե եռաբաշխիչ DN32x32x32	հատ	2	1,000	2,000
6	22-366	ճկուն կցորդիչ DN32	հատ	3	1,000	3,000
7	22-366	պոլիէթիլենե անկյունակ DN32	հատ	8	0,875	7,000
8	22-384	արույրե փական Φ32մմ	հատ	2	2,500	5,000
9	22-314	խողովակների ախտահանում	կմ	0,045	200,000	9,000
10	11-2	Բնահողի տոփանում խճով դիտահորի տակ	100մ^2	0,01	500,000	5,000
11	11-11	բետոնե հատակի կառուցում դիտահորի տակ B-7.5բետոնով 100մմ հաստ	մ^3	0,20	45,000	9,000
12	9-153	պողպատե խողովակից դիտահորի տեղադրում	տն	0,209	19,139	4,000
13	շուկա	Պողպ. խողովակ Φ530մմ	մ	1,50	20,000	30,000
14	շուկա	կափարիչ պողպ.թերթից 3մմ	մ^2	0,566	8,834	5,000
15	շուկա	ծխնի L-150	հատ	2	1,000	2,000
16	26-79	պողպատե էլեմենտների հակակոռոզիոն ներկում բիտումային մածիկով	100մ^2	0,06	66,667	4,000
17	15-614	պողպատե խողովակի հակակոռոզիոն ներկում 2 անգամ	100մ^2	0,04	100,000	4,000
18	1-1635	բնահողի հետլիցք մեխանիզմով	1000մ^3	0,015	600,000	9,000
19	1-968	փափուկ բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	2,00	4,500	9,000
20	1-1184	բնահողի տոփանում	մ^3	17,00	2,353	40,000
21	1-968	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	2,00	4,500	9,000
22	22-398	Միացում գոյություն ունեցող ցանցին Φ32 խողովակ	հատ	1	9,000	9,000
		Ջրախմոց				

1	1-1612	ջրախմոցի երկայնքով բնահողի կտրումով մեխանիզմով տեղափոխելով մինչև 10մ փռելով տեղում	1000մ³	0,0033	7575,758	25,000
2	1-969	նույնը ձեռքով	մ³	0,70	21,429	15,000
3	11-6	խճի նախաշերտ 10սմ	մ³	6,8	17,647	120,000
4	22-74 գ-0.5 շուկա	պողպատե կիսախողովակների տեղադրում Φ530x6մմ	գծմ	12,0	12,500	150,000
5	շուկա	պողպատե խողովակների կիսում Φ530x6մմ	գծմ	6,00	1,792	10,750
6	9-153	Մետաղական շինվածքներ կիսախողովակների տեղադրման համար	տն	0,1955	219,949	43,000
7	շուկա	Պողպ.քառակուսի խողովակ 100x100x5մմ	մ	10,12	6,374	64,500
8	շուկա	Պողպ.թերթ 6մմ	տն	0,0104	2283,654	23,750
9	շուկա	Պողպ.թերթ 5մմ	տն	0,0173	621,387	10,750
10	շուկա	Պողպ.խողովակΦ15մմ	մ	24,02	0,895	21,500
11	շուկա	Պողպ.խողովակ Φ32մմ	մ	4,30	2,500	10,750
12	22-366	պողպատե եռաբաշխիչ Φ32x32x32	հատ	1	1,075	1,075
13	22-366	պողպատե անցումակ Φ32	հատ	5	1,075	5,375
14	22-383	գնդային փական Φ 32մմ	հատ	3	1,075	3,225
15	շուկա	ճկուն կցորդիչ Φ32	հատ	2	2,688	5,375
16	շուկա	շերտապողպատ -40x4մմ	կգ	0,600	10,750	6,450
17	1-962	4-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով	մ³	1,00	5,375	5,375
18	6-20	բետոնե հիմքի կառուցում B-7.5 մակնիշի	մ³	1,10	43,977	48,375
19	1-968	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ³	1,00	5,375	5,375
20	15-614	մետաղական էլեմենտների հակակոռոզիոն ներկում 2 անգամ	100մ²	0,27	99,537	26,875
		Ընդամենը				*776,250*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06954139

Է. Կոշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կապալառու
<<Համբարյանշին>>ՍՊԸ
ք. Վանաձոր, Տավրոս 4 Փ., 2 նրբ., Տ 41
<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ՝16600182886100
ՀՎՀՀ՝ 06960732
Տնօրեն՝
Հ. Բրուտյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2
,Ռազմավարական զարգացման գործակալությունՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
,Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 20500224007001006
Նախագահ՝ Է. Այվազյան
լիազորված անձ՝ Գ. Թովմասյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«26» մարտի 2021թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/25/2»
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ (ՋՐԵԼԱՏԵՂԻ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
2	Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագոդարնոյե բնակավայրի ,,Ավազի հանք,, արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	**պայմանագրի կնքման օրվանից հաշված**	**31.05.2021թ.**
3	Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի ,,Ճահճի տարածք,, արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում		
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06954139

---------- Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Համբարյանշին» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տավրոս 4 Փ., 2 նրբ., Տ 41
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝16600182886100
ՀՎՀՀ՝06960732
Տնօրեն՝
Հ. Բրուտյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2
«Ռազմավարական զարգացման գործակալություն»ՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701006
Նախագահ՝ Մ. Այվազյան
լիազորված անձ՝ Գ. Թովմասյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N
«26» մարտի 2021թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/25/2»
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45241138/1	Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագոդարնոյե բնակավայրի ,,Ավազի հանք,, արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	929245,5	1858491	1858491	1858491	1858491	1858491	1858491	1858491	1858491	1858491
3	45241138/2	Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի ,,Ճահճի տարածք,, արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	439875	879750	879750	879750	879750	879750	879750	879750	879750	879750

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06954139

Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2
«Ռազմավարական զարգացման գործակալություն»ՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701006
Նախագահ՝ Մ. Սրվանձյան
լիազորված անձ՝ Գ. Թովմասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Համբարյանշին» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տավրոս 4 Փ., 2 նրբ., Տ 41
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝16600182886100
ՀՎՀՀ՝06960732
Տնօրեն՝
Հ. Բրուտյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 4.2
«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/25»* ծածկագրով
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

«25» Հոկտեմբեր 2024թ.**

«Համբարձանշին » ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Հերմինե Բրուտյանի (անձնագիր՝ AS 0531292, 27.02.2019թ., 018), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ և «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-Ի (այսուհետ՝ Պատվիրատուներ) կողմից կազմակերպված՝ ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/25 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը՝ որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը **անհետկանչելի են**, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի **կողմից** կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ **աշխատանքային** օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը **Պատվիրատուի** կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, **որ Ընկերությունը** թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, **որ սույն տուժանքի** համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու **անձի կողմից**:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ **ծագած վեճերը** լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը **լուծվում են դատական** կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Համբարձանշին » ՍՊԸ
ընկերության անվանումը

ք. Վանաձոր, Տավրոս 4 Փ., 2 նրբ., Տ 41
ընկերության հասցեն

«Էվոկաբանկ» ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հերմինե Բրուտյան
Կ.Տ

25/03 /2024թ
Օր/ամիս/տարի

լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ *Համբարձանշին » ՍՊԸ*	
5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ *«Էվոկաբանկ» ՓԲԸ*	
6. Վճարողի հաշվի համարը՝ *16600182886100*	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 06960732	
8. Վճարողի ՀՇՄՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան**	
10. Շահառուի ՀՇՄՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 06954139	
12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն**	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)՝ 900275081108	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 2738241 (երկու միլիոն յոթ հարյուր երեսունութ հազար երկու հարյուր քառասունմեկ)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ(AMD)	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>	
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

Հավելված 5.1
«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/25»* ծածկագրով
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

«25» Սեպտեմբեր 2021թ.**

*«Համբարձանշին » ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Հերմինե Բրուտյանի (անձնագիր՝ AS 0531292, 27.02.2019թ., 018),*որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

3. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ և «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-Ի (այսուհետ՝ Պատվիրատուներ) կողմից կազմակերպված ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/25 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

4. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող

պարտավորությունների ամբողջական կատարման **վերջին օրվան** հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը **Պատվիրատուի** կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, **որ Ընկերությունը** թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ **սույն տուժանքի** համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու **անձի կողմից:**

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ **ծագած վեճերը** լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են **դատական** կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Համբարյանշին » ՍՊԸ

ընկերության անվանումը

Ք. Վանաձոր, Տավրոս 4 Փ., 2 նրբ., S 41

ընկերության հասցեն

«Էվոկաբանկ» ՓԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

16600182886100

ընկերության բանկային հաշվեհամարը

06960732

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Հերմինե Բրուտյան

ընկերության տնօրենի անուն, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ. 25/03/2024թ

Օր/ամիս/տարի

լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ *Համբարյանշին » ՍՊԸ*

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ *«Էվոկաբանկ» ՓԲԸ*

6. Վճարողի հաշվի համարը՝ *16600182886100*

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 06960732

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **06954139**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)՝ **900275081108**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 273 830 (երկու հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր երեսուն)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ(AMD)

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*